ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը պարտավորվում է ապահովել աշխատանքային և ուսումնական միջավայր՝ զուրկ խտրականությունից, ոտնձգություններից, հետապնդումներից, վիրավորական վարքից կամ ահաբեկչությունից: Շրջանն արգելում է խտրականությունը, ոտնձգությունները, հետապնդումները, վիրավորական վարք կամ ահաբեկչությունը, որոնք կարող են պայմանավորված լինել փաստացի կամ ենթադրվող ռասային կամ էթնիկ պատկանելությամբ, գենդերով/սեռով (ներառյալ գենդերային ինքնությունը, գենդերային արտահայտումը, հղիությունը, երեխայի ծնունդը, կրծքով կերակրումը և համապատասխան բժշկական պայմանները), սեռական կողմնորոշմամբ, կրոնով, գույնով, ազգային պատկանելությամբ (ներառյալ լեզվի օգտագործման սահմանափակումներ և վարորդական իրավունքի տիրապետումը ըստ տրանսպարտային օրենսգրքի), ծագմամբ, նախնիներով, էմիգրացիոն կարգավիճակով, ֆիզիկական կամ մտավոր սահմանափակումներով (ներառյալ կլինիկական դեպրեսիա և երկբևեռ աֆեկտիվ խանգարումը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, հետատիտը, էպիլեպսիան, ցնցումային նոպաները, դիաբետը, ցրված սկլերոզը և սրտի հիվանդությունները), առողջական վիճակով (քաղցկեղի հետ կապված և գենետիկական հատկանիշներով), զինվորական և վետերանական կարգավիճակով, ամուսնական կարգավիճակով, գրանցված քաղաքացիական ամուսնության կարգավիճակով, տարիքով (40 տարեկան և ավել), գենետիկական ինֆորմացիայով, քաղաքական հայացքներով կամ պատկանելությամբ (արհմիությանը չառնչվող), կամ փաստացի կամ ենթադրվող նշված բնորոշ հատկանիշներից մեկը կամ մի քանիսը ունեցող մեկ անձի կամ խմբի հետ տվյալ անձի առնչությամբ, Ամերիկայի սկաուտների և այլ որոշ երիտասարդական խմբերին պատկանելությամբ, կամ դաշնային, նահանգային կամ տեղական օրենքով, կանոնակարգով կամ այլ իրավական ակտով պաշտպանված որևէ այլ հիմունքով, շրջանի կողմից անցկացվող կամ աջակցվող աշխատանքի և ցանկացած ծրագրի կամ գործունեության շրջանակներում:

Խտրականությունը դա անհատի նկատմամբ անպատշաճ վերաբերմունք է՝ որը հիմնված է որևէ պաշտպանված կատեգորիային պատկանելիության վրա, որևէ կրթական ծրագրի, աշխատանքի կամ գործունեության շրջանակներում առանց օրինական, «ոչ խտրական» պատճառի, որը զրկում է անհատին հնարավորությունից կամ սահմանափակում է իր հնարավորությունը՝ մասնակցելու Շրջանի գործունեությանը կամ օգտվելու Շրջանի կողմից տրամադրվող ծառայություններից կամ արտոնություններից, կամ ներառում է բացասական աշխատանքային գործողություն:

Ոտնձգությունը, որը ստեղծում է անտանելի միջավայր, տեղի է ունենում, երբ թիրախը ենթարկվում է անընդունելի վերաբերմունքի՝ որևէ պաշտպանված կատեգորիային պատկանելիության հիման վրա: Դա վիրավորական է թե՛ թիրախի համար, թե՛ կարող է վիրավորական լինի նույն կատեգորիային պատկանող ողջամիտ անձի համար նույն հանգամանքներում: Ոտնձգությունը բավականաչափ ծանր, հարատև կամ կայուն երևույթ է, որը կարող է զրկել անհատին հնարավորությունից կամ սահմանափակի իր հնարավորությունը՝ արդյունավետ աշխատելու կամ մասնակցելու Շրջանի գործունեությանը կամ օգտվելու Շրջանի կողմից տրամադրվող ծառայություններից կամ արտոնություններից: Ոտնձգությունը կարող է ընդունել հետևյալ, ինչպես նաև այլ ձևերը՝ խոսքով վիրավորանք կամ պիտակավորում, պատկերային կամ գրավոր արտահայտություններ կամ ցանկացած վարքագիծ, որը կարող է լինել սպառնալից կամ նվաստացուցիչ: Ոտնձգությունը՝ հիմնված վերը նշված պաշտպանյալ կատեգորիաներից որևէ մեկին պատկանելիության վրա անօրինական խտրականության ձև է և չի հանդուրժվի Շրջանի կողմից և կարող է առաջ բերել կարգապահական գործողություններ ընդդեմ վիրավորանք հասցրած աշակերտի կամ աշխատակցի:

Որևէ իրական կամ ենթադրվող պաշտպանված կատեգորիային պատկանելիության հիման վրա խտրականության, ոտնձգության, ահաբեկման, վիրավորական վարքի կամ ծաղրանքի ենթարկելու գործողության ականատես լինելու դեպքում դպրոցի անձնակազմից պահանջվում է անմիջապես ձեռնարկել նման գործողությանը միջամտելու քայլեր, երբ այդպես վարվելը անվտանգ է: Նման դեպքերի մասին դպրոցի/գրասենյակի կողմից հստակ ծանուցում կամ հիմնավորում ստանալուց հետո, անկախ այն բանից՝ դա կատարել է աշխատողը, աշակերտը, թե երրորդ կողմը, դպրոցը կամ գրասենյակը պետք է անհապաղ ձեռնարկի պատշաճ քայլեր՝ քննելու կամ այլ կերպ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և շուտափույթ կերպով ձեռնարկի ողջամտորեն հաշվարկված արդյունավետ քայլեր՝ վերջ դնելու նման վարքին, վերացնելու անբարենպաստ պայմանները, եթե դրանք ստեղծվել են, և կանխելու նման վարքի կրկնվելը: Նշված քայլերը պետք է ձեռնարկվեն անկախ այն բանից՝ անհատը ներկայացրել է բողոք կամ դիմել է գործողություններ ձեռնարկելու խնդրանքով դպրոց/գրասենյակ, թե ոչ: Հայցվորները պաշտպանված են վրեժխնդրությունից: Շրջանն արգելում է վրեժխնդրությունը որևէ անձի դեմ, որը բողոք կամ բողոքարկում է ներկայացնում, զեկուցում է մարմիններին անհամապատասխանության, խտրականության, ոտնձգության, հետապնդման, վիրավորական վարքի կամ ահաբեկչության մասին կամ մասնակցում է բողոքի ներկայացման կամ հետաքննության գործընթացին: Խտրականության բացառման այս քաղաքականությունը վերաբերվում է Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի վերակացուի իրավասության ներքո գտնվող ցանկացած դպրոցի կամ գրասենյակի գործունեությանը կամ հաճախումներին առնչվող բոլոր դեպքերին:

<u>Տեղեկություններ ստանալու կամ բողոք ներկայացնելու համար՝ իրական կամ ենթադրվող պաշտպանված կատեգորիային պատկանելիության հիման վրա աշակերտին խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ ծաղրանքի ենթարկելու դեպքերի վերաբերյալ դիմեք ձեր դպրոցի ադմինիստրատորին, Title IX/ահաբեկման վերաբերյալ բողոքների մենեջերին կամ.</u>

Բին Նգուեն, Շրջանի Բաժին 504 և Title IX համակարգող/Կրթական հավասարության բաժնի պատասխանատու
Աշակերտների քաղաքացիական իրավունքների գրասենյակ; (213) 241-7682; EquityCompliance@lausd.net
Քեներ Արինգթոն, Title II/ADA-ին համապատասխանության ադմինիստրատոր
ADA-ին համապատասխանության գրասենյակ; (213) 241-4530; ADA-info@lausd.net
ԱՄՆ-ի պետքարտուղարության կրթության վարչության քաղաքացիական իրավունքի

<u>Տեղեկություններ ստանալու կամ բողոք ներկայացնելու համար՝ խտրականության, ոտնձգության, վիրավորական վարքի կամ ահաբեկման հետ կապված՝ «աշխատակից դեպի աշխատակից», «աշակերտ դեպի աշխատակից» դեպքերում կամ աշխատանքին վերաբերվող դեպքերում, դիմեք ձեր դպրոցի ադմինիստրատորին կամ.</u>

Հավասար հնարավորությունների բաժին՝ (213) 241-7685

Բոլոր գրասենյակները գտնվում են՝
Los Angeles Unified School District
333 South Beaudry Avenue
Los Angeles, CA 90017